1651²
1651²
12480
213

ՊԱՏՄԵՆ

Տ. Կ.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԵՌԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

12480

Սինոդի Սրբոյ Էջմիածնի.

Առաքելով ընդ այսմ զ«ծխական կանոնադրութիւն Հայաստանեայց ս. եկեղեցւոյ», բաղկացեալ ի 93 յօդուածոց, որպիսին կազմեալ և տուեալ էր Մեր ի ժամանակաւոր փորձնական գործադրութիւն ի 1900 ամի, և այժմ խորհուրդն Դիւանի և Սինոդականաց ի նկատի առեալ զկոնդակս նախկինս արձակեալս յայլևայլ ժամանակի, նաև զնորոգ կարգադրութիւն փոխարքայի զկանոնաց գոյից եկեղեցւոյ մերոյ, այլ և զկարծիս ժողովրդականաց և հոգևոր պաշտօնէից, բարեփոխեալ և դասաւորեալ զայն առաջի աչաց Մեզ ի վերջնական տնօրէնութիւն, և Մեք հաճ և հաւան գտեալ ընդ այն՝ պատուիրեմք այսու Հայրապետական կոնդակաւ Մերով ի 1-ն փետրուարի 1907 ամի ի կատար ածել ամենայն ճշտութեամբ և պարտաճանաչութեամբ։

ՄԿՐՏԻՉ Կաթուղիկոս ամենայն Հայոց

Ի 11-ն Յունվարի 1907 ամի
և ըստ տոմարիս ՌՅԾԶ
ի Հայրապետութեան մերում ԺԴ. ամի
յԱյրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
թ. 40.

12480

Հայաստանեայց Առաքելական սուրբ Եկեղեցու Ծխական Կանոնադրութիւն

Ա.

ՀԱՄԱՅՆՔԻ, ԾԽԱԿԱՆԻ ԵՒ ԻՐԱՒԱՄՈՒԻ ՄԱՍԻՆ

1. Իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղի ամեն մի հայ եկեղեցու կամ աղօթատան բոլոր ծխականները նոյն եկեղեցու բոլոր միաբան հոգևոր պաշտօնեաների հետ միասին կազմում են մի ծխական համայնք։

2. Որ և է հայ եկեղեցու կամ աղօթատան ծխական են համարւում այն անձինք, որոնք առ նուազն վեց ամիս իբրև ծխական արձանագրուած են նոյն եկեղեցու կամ աղօթատան միաբան քահանաներից մէկի մատեանում (տես յօդ. 83)։

3. Ծխականների պարտականութիւնն է իրանց եկեղեցու ծխական ժողովի խնդրած ծառայութիւններին յանձնառու և եկեղեցական պէտքերի պահանջած ծախքերին մասնակից լինել։

4. Մի անձն միևնոյն քաղաքում կամ գիւղում կարող է միայն մի եկեղեցու կամ աղօթատան ծխական լինել, ենթարկուելով այդ եկեղեցու ծխական ժողովից սահմանուած տուրքերին և բոլոր ծխական պարտականութիւններին։

5. Ծխական բոլոր պաշտօնեաները՝ թէ հոգևորական և թէ աշխարհական, թէ պատուաւոր և թէ վարձատրելի, ընտրւում են ծխական ժողովից։

6. Բոլոր պաշտօնեաները վերընտրելի են բացի յատկապէս յիշուածներից։

7. Նորեկները, այսինքն մի այլ ծխական համայնքից տեղափոխուողները՝ նոր եկեղեցու կամ աղօթատան ծխական համարուել կարող են սոյն եկեղեցու ծխական գրուելուց վեց ամիս յետոյ։

Լոկ ժամաւորները, որոնք ծխական չեն՝ ծխական ժողովին մասնակցելու իրաւունք չունին։

9. Ծխական իրաւասու են, այսինքն՝ ծխական ժողովներին մասնակցելու և պաշտօններ ստանձնելու իրաւունք ունին 21 տարին լրացրած բոլոր ծխականներն արք և կանայք, բացի նրանցից, որոնք հետևեալ յօդուածի (յօդ. 10) հիման վրայ զրկուած են այդ իրաւունքից։ Տարիքը պէտք է հաշուել ոչ ամիսներով, այլ տարեթուերով։

10. Ծխական ժողովին մասնակցելու և ընտրուելու իրաւունքից զրկուում են այն ծխական իրաւասուները՝

ա) Որոնք հոգևոր իշխանութեան օրինական դատաստանով զրկուած են այդ իրաւունքից և կամ գտնուում են ապաշխարութեան տակ։

բ) Որոնք պետական օրէնքների զօրութեամբ և դատաստանով քրէական յանցանքների համար բոլորովին կամ մասամբ զրկուած են իրաւունքներից։

գ) Որոնք դատաստանի տակ են այնպիսի յանցանքների համար, որպիսիների հետևանքը լինում է բոլորովին կամ մասամբ իրաւունքներից զրկուելը,— մինչև դատաստանով արդարանալը։

Բ.

ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

11. Իւրաքանչիւր եկեղեցու կամ աղօթատան բոլոր իրաւասու ծխականները նոյն եկեղեցու կամ աղօթատան միաբան հոգևոր պաշտօնեաների հետ միասին կազմում են ծխական ժողով։

12. Ծխական ժողովի նիստերը դռնբաց են լինում։

13. Բացի յատկապէս նախատեսուած դէպքերից ծխական ժողովների բոլոր վճիռները և ընտրութիւնները կատարուում են ձայների հաստատակ մեծամասնութեամբ։ Ձայների հաւասարութեան դէպքում գերակշռում է այն կողմը, որին իւր ձայնը տալիս է ժողովի նախագահը։

14. Միմիայն կանոնաւոր կերպով կայացած՝ ծխական ժողովում սահմանուած և ստորագրուած վճիռները և

համախոսականները համարում են վաւերական և օրինական զօրութիւն ունեցող։ Ծխական ժողովից դուրս կազմուած որ և է համախոսական կամ բազմաստորագիր թուղթ, նոյն իսկ պաշտօնապէս վաւերացուած ստորագրութիւններով, ոչ մի օրինական ոյժ չունի։

15. Եթէ իրաւասու ծխականներից մէկը ժողովի իրաւասութեանը պատկանող որ և է գործի վերաբերմամբ խարդախութիւն, կեղծիք կամ խաբեբայութիւն է արել և ժողովի կողմից այդ ապացուցուել է՝ ժողովի յատուկ վճռով այդպիսին կարող է զրկուել նոյն գործին առ ժամանակ կամ ընդ միշտ որ և է կերպով մասնակցելու իրաւունքից։

16. Ծխական ժողովի իրաւունքն է ձայների մեծամասնութեամբ փակել, ընդհատել կամ յետաձգել նիստի շարունակութիւնը նոյն կամ ուրիշ օրուայ։

17. Ծխական ժողովի իրաւասութեանը պատկանում են հետևեալ գործերը.

ա) Քահանայացուների և եկեղեցական սպասաւորների ընտրութիւնը, ծխաբաժանութիւնը, քարոզիչներ հրաւիրելը։

բ) Ծխական համայնքի տնտեսականի ընդհանուր կառավարութիւնը և տնօրէնութիւնը. երեսփոխ, հոգաբարձուներ ընտրելը և պաշտօնից հեռացնելը. նրանց գործունէութեան քննութիւնը, վերահսկողութիւնը և հաշուառութիւնը. յանցաւորութեան դէպքում՝ նրանց քրէական և քաղաքացիական դատի ենթարկելը յատուկ հաւատարմատարի ձեռքով։

գ) Եկեղեցու կամ աղօթատան բարեզարդութեան մասին հոգացողութիւն (անօթների մատակարարութիւն, երգեցիկ խումբ կազմակերպել և պահելը, և այլն)։

դ) Քահանաների և եկեղեցական այլ պաշտօնեաների տնտեսական ապահովութեան խնդիրը։

ե) Ծխական տուրքեր և պարտականութիւններ սահմանելը։

զ) Բանալ ուսումնարաններ, հիւանդանոցներ, աղքատանոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ (տես Փոխ, Կան.)

է) Ծխական համայնքի բարեգործական գործունէութեան ընդհանուր անօրէնութիւնը. նոյն եկեղեցուն կամ աղօթատան պատկանող ստուածահաճոյ հաստատութիւնների պահպանութիւնը, վերահսկողութիւնն և դրանց կառավարող յատուկ հոգաբարձուների ընտրութիւնը։

ը) Հարկ եղած դէպքերում ծխական համայնքի շահերը պաշտպանելը պետական դատարաններում, քրէական և քաղաքացիական դատեր վարելով երեսփոխի կամ մի յատուկ հաւատարմատարի ձեռքով։

թ) Վկայութիւն և կարծիք յայտնել եկեղեցական զանազան հաստատութիւններում քննուող և վճռուող այն գործերի և խնդիրների մասին, որոնք վերաբերում են ծխական համայնքին կամ նոյն համայնքի աշխարհական և հոգևորական անդամներին։

ժ) Հարկաւոր դէպքերում հոգաբարձական յանձնաժողովներ ընտրելը՝ շինութիւններ, նորոգութիւններ և ծխական ժողովից յանձնարարուած այլ գործողութիւններ կատարելու համար։

ժա) Ծխական համայնքի բոլոր գործերի վերաբերմամբ անհրաժեշտ և հարկաւոր կարգադրութիւններ սահմանելը։

ժբ) Պատգամաւորներ, ներկայացուցիչներ և նրանց փոխանորդներ ընտրելը ծխական համայնքի կողմից ուրիշ պատգամաւորական (օր. թեմական) ժողովների և այլ զանազան եկեղեցական գործառնութեանց մասնակցելու համար։

18. Ծխական ժողով հրաւիրելու իրաւունք ունին՝

ա) Հոգևոր իշխանութիւնը։

բ) Նոյն եկեղեցու իւրաքանչիւր քահանայ,

գ) Երեսփոխը և հոգաբարձուները,

դ) Մի քահանայ ունեցող ծխական համայնքում իրա-

ւատու ծխականներից առնուազն տասն և երկու (12) հոգի միասին, իսկ մէկից աւելի քահանայ ունեցող ծխական համայնքում՝ իրաւասուներից առնուազն քսան և չորս հոգի (24) միասին։

19. Ժողովի հրաւէրը կատարւում է գրաւոր հրաւիրաթղթով. պահանջւում է նաև բանաւոր ծանուցումն եկեղեցում։

—Հրաւիրաթուղթն ուղարկւում է եկեղեցու կամ աղօթատան բոլոր իրաւասուներին, իսկ մի մի օրինակ կախ է տրւում (առնուազն մի շաբաթ) եկեղեցու պատի վրայ. մուտքի դրան մօտ՝ ներսը և դուրսը՝ յատուկ տեղում։ Հրաւիրաթղթում արձանագրուած պիտի լինի ժողովում խորհրդածուելիք և վճռուելիք հարցերի օրակարգը։

—Եկեղեցու կամ աղօթատան քահանաները պարտաւոր են եկեղեցում բերանացի ծանուցումներ անել գումարուելիք ժողովի մասին գոնէ երեք անգամ։

20. Սովորական ծխական ժողովատեղին է եկեղեցին։ Արտակարգ դէպքերում ժողովը կարող է գումարուել և մասնաւոր շէնքում։ Ժողովի ժամանակ եկեղեցում սեղանի վարագոյրը քաշուած է լինում։

21. Ժողով եկող իւրաքանչիւր ծխական էրաւասու ստորագրում է իւր անունը և ազգանունը յատուկ թերթի վրայ։

22. Ծխական ժողովը առաջին անգամ կանոնաւոր է համարւում և նիստը բացւում է, եթէ ներկայ եղող ծխական իրաւասուների թիւը նոյն եկեղեցու կամ աղօթատան էրաւասուների (տարեցուցակում արձանագրուածների, տես յօդ. 84) ընդհանուր թուի կիսից աւելի է։

23. Եթէ առաջին անգամ ժողովը չկայանայ՝ գումարուած ծխական իրաւասուների սակաւութեան պատճառով (յօդ. 22)՝ կրկին անգամ իրաւասուները ժողովի են հրաւիրւում 19 յօդուածում ցոյց տուած եղանակով, նշանակելով հրաւիրաթղթում, որ այս երկրորդ ժողովի հրաւէրն է։

24. Երկրորդ ժողովը (յօդ. 23) կանոնաւոր է համարւում և նիստը բացւում է, եթէ ներկայ եղող ծխական

իրաւասունների (տարեցուցակում արձանագրուածներին, տես յօդ. 84). ընդհանուր թուի մի տասներորդ մասից պակաս չէ, իսկ քահանայութեան ընտրութեան դէպքում մի հինգերորդ մասից, (1/5)։

25. Եթէ երկրորդ անգամ հրաւիրուած ժողովը ներկայ եղող իրաւասունների թուի ստկաւութեան պատճառով չկայանայ, Հոգևոր իշխանութեան պարտականութիւնն է, եթէ միայն կան կարևոր և անյետաձգելի հարցեր, իւր նախաձեռնութեամբ և իւր ձեռքում եղած բոլոր միջոցներով ծխական իրաւասուներին ժողովի գումարել. իսկ անյաջողութեան դէպքում Հոգևոր իշխանութիւնը դիմում է թեմական իշխանութեան, խնդրելով տնօրէնութիւն։

26. Քաղաքներում ծխական ժողովի նիստը բաց է անում նոյն ծխական համայնքի քահանան, քահանայի բացակայութեան դէպքում երեսփոխը, իսկ երեսփոխի բացակայութեան դէպքում՝ ներկայ գրագէտ իրաւասուներից տարիքով աւագը։ Ժողով բացողն 21-րդ յօդուածում յիշուած թերթի ստորագրութիւնները բարձրաձայն համեմատում է ծխական իրաւասուների տարեցուցակի (տես յօդ. 84, 85) հետ և ստուգում ներկայ գտնուող ծխականների իրաւունքը ժողովին մասնակցելու (այս վերաստուգուած թերթը յետոյ կցւում է ժողովի արձանագրութեանը). ապա ձեռնարկում է նախագահի ընտրութեանը և նախագահի ընտրութիւնից յետոյ համարւում է լոկ ժողովական։

27. Ծխական ժողովի քարտուղարին, քուէտուփերի վրայ հսկողներին, քուէներ հաշուողներին, անգրագէտների համար թերթիկների վրայ գրողներին և նման պաշտօնեաներին ընտրում է ծխական ժողովը։

28. Նախագահը հսկում է ընդհանուր կարգապահութեանը և ծխական ժողովի բոլոր գործողութիւնների՝ կանոնաւորութեան և վայելչութեան սահմաններից չչեղաւելուն։

29. Նախագահն իրաւունք ունի ծխական ժողովին ներկայ եղող կողմնակի, ոչ ժողովական (յօդ. 9, 10) անձերին,

որ և է անկարգութեան դէպքում, անմիջապէս հեռացնել ժողովից, կողմնակի անձանց թոյլատրւում է միմիայն լուռ ունկնդրութիւն։

30. Երկու անգամ պաշտօնապէս կարգի հրաւիրելուց յետոյ՝ նախագահն իրաւունք ունի անկարգապահ ժողովականին զրկել խօսելու իրաւունքից, իսկ անկարգութեան յաւառ շարունակութեան դէպքում, նոյն իսկ հրաւիրել ժողովականին թողնել ժողովը և հեռանալ։

31. Ծայրայեղ դէպքերում՝ երբ անգամ ամբողջ ծխական ժողովը կարգի հրաւիրելուց յետոյ, երբ այլ ևս անհնարին կլինի շարունակել նիստը խռովութիւնների պատճառով, նախագահն իրաւունք ունի նիստը փակուած յայտարարել։

32. Ծխական ժողովում խորհրդածութեան և ձայնատուութեան առարկայ են լինում միմիայն օրակարգում նշանակուած հարցերը՝ բայի յատկապէս յիշուած խնդիրներից։

33. Իւրաքանչիւր ժողովական ունի միայն մի ձայն կամ մի քուէ։

34. Որ և է պատճառով ժողով չեկող ծխական իրաւասուն իւր ձայնը կամ քուէն ուրիշին յանձնելու իրաւունք չունի. բայց իրաւունք ունի իւր գրաւոր կարծիքն ուղարկել ժողովին, որ կարող է կարդացուել քուէարկութիւնից առաջ, եթէ ժողովն այդ կամենայ։ Բայց այս գրաւոր կարծիքը հաշուի չէ առնում որպէս ձայն քուէարկութեան ժամանակ, այլ կցւում է ժողովի արձանագրութեանը։

35. Օրակարգում նշանակուած խնդիրներում անձնական շահ ունեցող ժողովականը չէ կարող ընտրուել ծխական ժողովի նախագահ (յօդ. 36)։

36. Այն ժողովականները, որոնք որ և է անձնական շահ ունին խորհրդածուելիք և վճռուելիք խնդրում, կամ եթէ այդ խնդիրն իրանց է վերաբերում՝ այդ խնդրի խորհրդածութեան և վճռման ժամանակ ժողովից հեռանում են։ Ժողովականի կամ նախագահի (յօդ. 35) շահակից լինելը որոշում է ժողովը։ Այդպիսիներից ժողովը

կարող է հարցնել նրանց կարծիքը և ունեցած տեղեկութիւնները։

37. Երբ նախագահը որ և է պատճառով դեռ ժողովը չփակուած ստիպուած է թողնել նախագահութիւնը, պէտք է ընտրել նոր նախագահ։

38. Ի պաշտօնէ նախագահողները՝ եթէ նոյն ծխական համայնքի իրաւասու չեն՝ ձայնատուութեան կամ քուէարկութեան չեն մասնակցում։

39. Ծխական ժողովի որոշմամբ՝ ձայնատուութիւնը կամ քուէարկութիւնը (թէ վճռաւելիք հարցերի և թէ ընտրութիւնների) կարող է լինել թերթիկներով, քուէներով և կամ ձեռք բարձրացնելով։

40. Ձայնատուութիւնը գաղտնի է լինում, եթէ ժողովականներից նոյն իսկ մի հոգի քուէարկութիւնից առաջ այդ կպահանջի։

41. Թեկնածուներ որոշելիս նախագահը բաժանում է բոլոր ժողովականներին իւր կնքով կամ ստորագրութեամբ նշնած մի մի թերթիկ, որի վրայ ամեն մի ժողովական գրում է իւրաքանչիւր ընտրելի պաշտօնեայի համար երկու թեկնածուից ոչ աւելի։ Այդ թերթիկները հաւաքւում, հերթով կարդացւում են և նշանակւում է իւրաքանչիւր թեկնածուի ստացած ձայների թիւը։ Այնուհետև թեկնածուները քուէարկում են ստացած ձայների առաւելութեան կարգով։

42. Քուէարկուել կարող են նաև ժողովից բացակայող անձինք, եթէ առաջարկողներն երաշխաւորում են որ նրանք չեն մերժի իրանց ընտրութիւնը։

43. Ինքը թեկնածուն չէ կարող մասնակցել իւր քուէարկութեանը։

44. Երբ մի պաշտօնի համար մի քանի անձինք պիտի ընտրուին (պատգամաւորներ և այլն), ընտրութիւնն անպատճառ կատարւում է թերթիկներով, եթէ այդ պահանջեն ժողովականներից առ նուազն հինգ հոգի։

45. Երբ ընտրութիւնը թերթիկներով է կատարւում ընտրողական թերթիկները նշնւում են նախագահի ստորագրութեամբ կամ կնքով, հաշուով բաժանւում են ժո-

զովականներին, ձայնատուութիւնից յետոյ հաշուով հաւաքւում և ընտրութեան արդիւնքը արձանագրելուց յետոյ՝ անմիջապէս և տեղնուտեղը ոչնչացուում են։

46. Եթէ որ և է պաշտօնի համար ընտրուելու են մի քանի անձինք և ընտրութիւնը կատարւում է թերթիկներով (յօդ. 44)՝ իւրաքանչիւր ժողովական իրաւունք ունի իւր ընտրողական թերթիկի վրայ՝ փոխանակ տարբեր մարդկանց անուններ գրելու, գրել միևնոյն մարդու անունը այնքան անգամ որքան հոգի են ընտրուելու։ Քուէարկուողը համարւում է ստացած այնքան ձայն, որքան անգամ որ նրա անունը կրկնուած է թերթիկներում։

47. Քուէարկութեան ենթարկուած թեկնածուների ստացած քուէները համարւում են և ձայների առաւելութեան կարգով ցուցակագրւում։ Ամենից շատ ձայն ստացողը համարւում է առաջին ընտրեալ, նրանից պակաս ստացողը՝ երկրորդ ընտրեալ, և այսպէս աստիճանաբար մինչև որ լրանայ ընտրելի պաշտօնեաների հարկաւոր թիւը։ Սոյն՝ այսինքն ստացած քուէների առաւելութեան՝ կարգով դասաւորւում են և անձնափոխանորդները։

48. Միայն այն ձայնատուութիւնը՝ կանոնաւոր կարող է համարուել, որին մասնակցել է՝ նիստի բացման ժամանակ ներկայ եղող՝ իրաւասուների կիսից աւելին։

—Միայն այն վճիռը կամ ընտրութիւնը կայացած և վաւերական է համարւում, որ ստացել է յօգուտ իւր՝ նիստի բացման ժամանակ ներկայ եղող՝ իրաւասուների քուէների կիսից աւելին։

49. Ծխական ժողովը փակուելուց առաջ քարտուղարը կարդում է իւր կազմած արձանագրութիւնը, որի մէջ յաջորդական կարգով արձանագրուած են լինում ժողովի բոլոր անցքերը և վճիռները։ Մանրամասնօրէն արձանագրւում են՝ նախագահի կողմից կարգի հրաւիրման, ձայնից զրկելու և ժողովից հեռացնելու դէպքերը։ Արձանագրութիւնը կարդացուելուց յետոյ՝ ուղղւում են ապրդած սխալները՝ և ապա բոլոր ժողովականները ստորագրում են նոյն այդ ժողովում։

50. Ծխական ժողովի վճիռների և ընտրութիւնների

դէմ բողոք ունեցող ժողովականներն իրաւունք ունին արձանագրութեան տակ իրանց ստորագրութեան վրայ աւելացնել միայն այս երկու բառը՝ «բողոք ունիմ»։ «Բողոք ունիմ» գրողը և առհասարակ բողոք ունեցողն երեք օրուայ ընթացքում տալիս է իւր գրաւոր բողոքը նախագահին կամ քարտուղարին արձանագրութեանը կցելու համար։ Բողոքողն իրաւունք ունի իւր բողոքի պատճէնը վաւերացնել տալ նախագահի և քարտուղարի ստորագրութեամբ, իւր մօտը պահելու համար։

51. Ծխական ժողովի բողոքաւոր վճիռների արձանագրութեանց պատճէնները՝ ժողովի օրից առ առաւելն մի շաբաթուայ ընթացքում նախագահը պարտաւոր է ուղարկել մերձաւոր Հոգևոր իշխանութեան միջոցով թեմական իշխանութեանը։ Թեմական իշխանութեան վճռի կամ բացատրութեան դէմ, հարկ եղած դէպքում, կարելի է բողոքել Հոգևոր բարձրագոյն իշխանութեան։

52. Այն անբողոք վճիռները, որոնք վերաբերում են ծխական ժողովի իրաւասութեան պատկանող գործերին (յօդ. 17), անմիջապէս գործադրւում են, բացի յատկապէս յիշուածներից։

53. Երեսփոխի և հոգաբարձուների ընտրութիւնը և հեռացումը հաղորդւում է ի հաստատութիւն և ի գիտութիւն թեմական իշխանութեան։

54. Կոնսիստորիան, եթէ գտնի որ ընտրուածը համապատասխան չէ կանոններում նշանակուած որ և է օրինական պահանջի, առ առաւելն մէկ ամսուայ ընթացքում յայտնում է այդ մասին ծխական ժողովին։ Մէկ ամսուայ ընթացքում Կոնսիստորիայից պատասխան չըստացուելու դէպքում ծխական ժողովի վճիռն անմիջապէս գործադրւում է և ընտրուածներն ստանձնում են իրանց պաշտօնները։

—Մէկ ամիսն հաշւում է ընտրութեան օրից։

Գ.

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(ՋԱՀԸՆԿԱԼ, ՍԱՐԿԱՒԱԳ, ՔԱՀԱՆԱՅ,)

55. Ուրաքանչիւր համայնք, քաղաքներում և գիւղերում որչափ էլ փոքրաթիւ լինի կարող է իւր սեպհական

քահանան ունենալ, եթէ միայն համայնքը կարողանայ քահանայի տնտեսական վիճակը։

56. Մի քանի սակաւաթիւ համայնքներ, որոնք առանձին առանձին չեն կարող իրենց սեպհական քահանան ունենալ, կարող են ընդհանուր համաձայնութեամբ իրենց սեպհական քահանան ունենալ, եթէ նրանց հաղորդակցութեան միջոցները արդելաւոր հանգամանք չեն ծառայիլ։

57. Ուրաքանչիւր քահանայ պիտի ունենայ 250 ծուխ—մատաղաբաժին։ Երկրորդ քահանայի խնդիր համայնքը կարող է յարուցանել այն դէպքում երբ ծխականների տների թիւը կը հասնի 350*)։ Ըստ այսմ երրորդ քահանայի խնդիր համայնքը կարող է յարուցանել այն դէպքում, երբ երկրորդ քահանայի համար արդէն լրացած կը լինի սահմանեալ 250 ծուխը և աւելացած կը լինի նաև 100 տուն։ Նոյն հետևողականութեամբ պիտի վարուիլ յաջորդական քահանայական ընտրութիւնների բոլոր դէպքերում։

58. Եթէ քահանայի ծերութեան կամ մի որ և է անբուժելի հիւանդութեան դէպքում, որն արդելք է լինում նրան քահանայագործելու, համայնքը յարուցանում է նոր քահանայ ունենալու խնդիր, այդ դէպքում վերջինս գրաւոր ստորագրութեամբ պարտաւորւում է արդիւնքների կէսը յատկացնել ծեր կամ հիւանդ քահանային ցմահ և կամ ինքը համայնքն է դոհացումն տալիս նրան, հակառակ դէպքում նոր քահանայի խնդիրը մերժւում է թեմական իշխանութեան կողմից։

59. Հոգևոր պաշտօնեաներ ընտրելիս ծխական ժողովը պիտի անշեղ կերպով առաջնորդուի հետևեալ հրահանգով.

---

*) Ծանօթ. Երկրորդ քահանան մինմիայն հոլովում է իւր ծուխը. նա կարող է աւագադոյն քահանայի ծուխը հոլովել կամ նրա ծխից բաժին ստանալ վերջինս գրաւոր թոյլատրութեամբ։

ա) Ընտրելիները պիտի համապատասխանեն, բացի մեր եկեղեցու ընդհանուր կանոնական պահանջներից՝ նաև հետևեալ պայմաններին. պիտի օժտուած լինեն բարոյական արժանիքներով և ունենան քաղաքների համար Ս. Էջմիածնի ճեմարանի և կամ առ նուազն թեմական կամ այլ միջնակարգ դպրոցի աւարտման վկայագիր. իսկ գիւղերի համար առ նուազն չորս դասարանի վկայագիր. հարիւր տանից պակաս գիւղի համար առ նուազն թեմական դպրոցի երկրորդ դասարանի վկայագիր։ Աշխարհիկ դպրոցներում կրթուածները նաև Հոգևոր դպրոցների Դ. և Բ. դասարանի աւարտման վկայագիր ունեցողները կրօնական առարկաներից *) և Հայոց լեզուից՝ պահանջուած ծրագրով քննութիւն պիտի տան թեմական դպրոցում կամ ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանում։ **)

բ) Վկայագիր չունեցողները պիտի պատշաճաւոր քննութիւն տան՝ պահանջուելիք առարկաներից վկայագիր ձեռք բերելու համար՝ միայն թեմական դպրոցներում կամ ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանում։

գ) Ընտրուածի բարոյական անարատութեան մասին վկայելու է ծխական ժողովը։

60. Հոգևոր պաշտօնեայ ընտրուած կարող է համարուել միայն նա, ով ստացել է յօգուտ իւր ժողովում ներկայ եղող իրաւասունների ձայների $^2/_3$ մասը (տես. յօդ. 24)։

---

*) Ծանօթ. Հմտութիւն Ս. Գրոց, եկեղեցու խորհուրդները, կարգ Աստուածպաշտութեան, Տօնացոյցի գործածութիւնը, Հայոց եկեղեցու և Հայոց Պատմութիւնը, ամբողջութեամբ, երգեցողութիւն, (շարականները ըստ հնի կամ ձայնագրեալի)։

**) Ծանօթ. ճեմարանի և թեմական դպրոցի վարչութիւնները պարտաւոր են մինչև մի ամիսը քահանայացուի խնդիրը ստանալու օրից սկսած, քննութեան ենթարկել նրան և պահանջուելիք վկայականը տալ։ Քննութիւնը կատարում են առարկաների ուսուցիչները տեսչի կամ նրա օգնականի ներկայութեամբ։

61. Նախագահը ժողովի կազմած արձանագրութիւնն երկու օրուայ ընթացքում պարտաւոր է ներկայացնել մերձաւոր հոգևոր իշխանութեան, որը, պահանջելով քահանայացուի ուսման, ծննդեան, զինուորակոչի վկայականները, նրա համաձայնութեան ստորագրութիւնը, նաև տեղեկութիւն ընտրող համայնքի մատաղաբաժին ծխերի և քահանաների թուի մասին՝ ուղարկում է մի շաբաթուայ ընթացքում Վիճ. Կոնսիստորիային, վերջինս պարտաւոր է ստանալու օրից մինչև երկու շաբաթն ընթացք տալ գործին։

62. Գիւղերում հոգևոր պաշտօնեաների ընտրութիւնը կատարւում է անպատճառ գործակալ քահանայի կամ տեղական ցաղորդի ներկայութեամբ և նախագահութեամբ։

63. Ծխական համայնքը հոգում է իւր հոգևոր պաշտօնեաների տնտեսականը հետևեալ զանազան եղանակներով, ըստ որոշման ծխական ժողովի.

ա) Մշտական ռոճիկ, որ սահմանում է ծխական ժողովը.

բ) Տուրքեր, որ ստանում են հոգևոր պաշտօնեաները հոգևոր ծիսակատարութեանց համար.

գ) Կամաւոր նուիրաբերութիւններ։

դ) Գիւղերում — հող, կալամաս (տարեհախ)։

64. Հոգևոր պաշտօնեաների սովորոյթով ընդունուած հասոյթները կարելի է փոխարինել ռոճկով այնպիսի ծխական ժողովում և ձայների այնպիսի մեծամասնութեամբ, որ պահանջուր են այս կանոնադրութեան 60 յօդուածը։

Դ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՑՔԵՐԻ ՄԱՍԻՆ։

65. Իւրաքանչիւր ծխական համայնք ինքն է կառավարում և տնօրինում ծխական ժողովի միջոցով իւր գոյքը (բոլոր շարժական և անշարժ կայքը) յօգուտ նոյն ծխական եկեղեցու հիմնարկութիւնների և անձերի։

—Նոյն ծխական համայնքի շրջանից դուրս անելիք ծախ-

սերի համար անհրաժեշտ է Բարձրագոյն Հոգևոր իշխանության թույլատրությունը։

66. Առանց ծխական ժողովի համաձայնության նոյն ծխական եկեղեցուն յատկացուած և պատկանող գոյքից (բոլոր շարժական և անշարժ կայքից) ոչ մի ծախս լինել չէ կարող։

67. Ծխական հոգաբարձուները պարտաւոր են հաշիւ ներկայացնել թեմական առաջնորդին և թէ ծխական ընդհանուր ժողովին, որոնք այդ հաշիւների վերստուգության համար ընտրում են վերաստուգող յանձնաժողով։

68. Ծխական ժողովը իրաւունք ունի իւր որոշմամբ տարեկան ծախս անել գիւղերում՝ հարիւր (100) ռուբլուց ոչ աւելի, իսկ քաղաքներում վեց հարիւր (600) ռուբլուց ոչ աւելի։ Մինչև այս դումարներն եղած ծախսի մասին հաղորդւում է Կոնսիստորիային՝ մերձաւոր Հոգևոր իշխանության ձեռքով ի գիտութիւն։ Իսկ այս դումարներից վեր ծախսերի համար ծխական ժողովը պիտի խնդրէ Բարձրագոյն Հոգևոր իշխանության թոյլատրությունը։

69. Տնտեսական, այսինքն դրամական և գոյքի վերաբերեալ, այն խնդիրներն որոշելու համար, որոնց դումարը անցնում է ծխական եկեղեցու տարեկան եկամուտից կամ յամենայն դէպս գիւղերում հարիւր (100) ռուբլուց, իսկ քաղաքներում վեց հարիւր (600) ռուբլուց՝ —պահանջւում է որ վճիռը ստանայ յօգուտ իւր սովորական ծխական ժողովին (տես յօդ. 24,) ներկայ իրաւասուների ձայների երկու երրորդականից (2/3) ոչ պակաս։

70. Եթէ եկեղեցական եկամուտները բաւական չլինեն ծխի բոլոր կարիքներին բաւարարութիւն տալու, հոգաբարձությունը կազմում է ծխականներից միանուագ կամ պարբերաբար դրամով կամ բնական որոշ տուրք ժողովելու նախագիծ։ Այդ նախագիծն առաջարկւում է ծխական ընդհանուր ժողովի քննության և օրինաւոր կերպով ընդունելուց ու համախոսական կազմելուց յետոյ՝ պարտաւոր է դառնում համաձայնություն տուողների համար։

71. Ծխական եկեղեցապատկան դրամագլուխները տոկոսով աճեցնելու համար պիտի յանձնուին պետական

կամ հասարակական բանքային հաստատութեանց։ Այս դրամագլուխները կարելի է նաև մասնաւոր մարդկանց յանձնել՝ եթէ եկեղեցու համար այդ յարմար և ձեռնտու դատուի և յանձնուելիք գումարը հաստատ դրաւականով ապահովուի՝ միայն թէ Կոնսիստորիայի թոյլտուութեամբ և պատասխանատուութեամբ (տես Պոլոժ.)։

72. Այն բոլոր ծխական եկեղեցիները, որոնք տարեկան հազար (1000) ռուբլուց աւելի եկամուտ ունին, պէտք է իւրաքանչիւր տարուայ սկզբում ծխական ժողովով իրանց տարեկան ելևմուտքի նախահաշիւը (բիւջէ) կազմեն, թեմական իշխանութեան հաստատել տան և անցեալ տարուայ հաշիւն ու զեկուցումը երեսփոխից ու հոգաբարձուներից ստանալուց և ժողովում քննելուց յետոյ՝ պէտք է տպագրել տան այդ բոլորը, ծխական իրաւասուներին բաժանելու համար։

Այդ տպագրուած տեղեկագրից երկու օրինակ ուղարկւում է Վեհափառ Հայրապետի Դիւանը և մի մի օրինակ Հոգևոր կառավարութեան, Կոնսիստորիային, Սինոդին և Ս. Էջմիածնի պաշտօնական թերթին։

73. Իւրաքանչիւր ծխական եկեղեցի պիտի ունենայ մի ստոյգ և մանրամասն ժապաւիններալ մատեան եկեղեցու անշարժ գոյքը, անօթեղէններն և այլ իրերը և դրամագլուխները ցուցակագրելու համար, նաև այն բոլոր եկամուտների համար, որոնք որ և է իրաւունքով հասնելու են նոյն ծխական եկեղեցուն։ Նոյնպէս պիտի ունենայ մի ուրիշ «ելևմտից ժապաւիններալ հաշուեմատեան» ծխական եկեղեցու տարեկան բոլոր ելք ու մուտքը գրելու (տես Պոլոժ.)։

Ե.

ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԵՍՓՈԽԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

74. Ծխական եկեղեցու գոյքի կառավարութեան ընթացիկ գործավարութեան համար ծխական ժողովը ընտրում է մի երեսփոխ և 2—4 հոգաբարձու երեք տարի ժամանակով։ Հին կազմը կարող է վերընտրուել միմիայն այն

դէպքում, եթէ նրա հաշիւները քննուած են վերատեսուչի յանձնաժողովից և ճանաչուած են ծխական ժողովից իբրև ստոյգ և անթերի, այլ և նրա գործավարութիւնն անպարտաւոր։

75. Նոր հոգաբարձութեան ընտրելուց առաջ ծխական ժողովը պէտք է նախ քննէ հին կազմի հաշիւները վերատեսուչ յանձնաժողովի զեկուցումը նրա գործավարութեան մասին, և ապա կատարէ նոր հոգաբարձութեան ընտրութիւնը։ Իսկ եթէ հոգաբարձութիւնը ժամանակին չներկայացնէ հաշիւները, կամ եթէ ներկայացրած հաշիւները ծխական ժողովից կհամարուին անբաւարար կամ վիճելի — այս դէպքում՝ անմիջապէս կձեռնարկուի նոր կազմի ընտրութեանը, իսկ հինը կհամարուի պաշտօնից հեռացած և պատասխանատու իւր գործավարութեան և հաշիւների համար։

— Նոյն այս ժողովում՝ հարկ եղած դէպքում՝ կարելի է որոշել հին երեսփոխին դատի ենթարկել։

76. Նոր հոգաբարձութիւնը իւր պաշտօնը ստանձնելիս պարտաւոր է ստուգել եկեղեցապատկան բոլոր գոյքի (շարժական և անշարժ) անթերի և ամբողջ լինելը և ընդունել իւր նախորդից՝ 73 յօդ. հիման վրայ կազմուած ցուցակով։

77. Հին հոգաբարձութիւնը շարունակում է իւր պաշտօնավարութիւնը մինչև որ նորը կստանձնէ իւր պաշտօնը և իւր նախորդից յանձնողական ստացողական ցուցակով կընդունէ ծխական եկեղեցու բոլոր գոյքը (անշարժ և շարժական, տես յօդ. 72 և 73)։

78. Եկեղեցու գոյքի ամբողջութեան վրայ հսկելը, եկեղեցու արդիւնքների կառավարութիւնը, եկեղեցու գործերի պատշաճաւոր ատենական տեղերում պաշտպանութիւնը, եկեղեցական շէնքերի կառուցումը, վերանորոգումը, վարձով տալը և բոլոր նման գործերը մտնում են հոգաբարձութեան պարտաւորութեանց շրջանը։ Սա առ հասարակ գործում է իբրև հաւատարմատար ի գլուխ ծխական համայնքի. իսկ կարևոր գործերում նա իրաւունք

12480

ունի պահանջելու ծխականների ըստ կարելույն բազմամարդ ժողովից առանձին հաւատարմութիւն։ Սառնալով այս հաւատարմութիւնն այն գործերի համար, որ այս ծխական ժողովումն են որոշուած՝ նա արդէն ազատ է ամեն տեսակ պատասխանատուութիւնից ծխական համայնքի առաջ (յօդ. Պոլոժ. 4224/429)։

79. Հոգաբարձուները առանց ծխական ժողովի վճռի իրաւունք չունին ծախսելու՝ գիւղերում յիսուն (50) ռուբլուց աւելի, իսկ քաղաքներում հարիւր ռուբլուց (100) աւելի։ Դրամական՝ բոլոր ծախսերի համար պահանջւում է ստացողի ստորագրութիւնը «ելևմտից մատեանում», կամ առանձին ապացուցաթուղթ ստացողի ստորագրութեամբ։

80. Քաղաքներում ծխական եկեղեցու գումարներից հոգաբարձուները իրաւունք չունին հարիւր (100) ռուբլուց աւելի առձեռն դրամ պահելու մտերը։ Աւելի գումարները պիտի յանձնուին պետական և հասարակական բանքային հաստատութեանց՝ (տես յօդ. 71) ծխական եկեղեցու անունով։ Այդ դրամատներից փող ստանալու համար հոգաբարձները պիտի ունենան ծխական ժողովի համաձայնութեան թուղթը (համախօսականը)։

81. Գիւղերում իւրաքանչիւր վեց ամիսը մի անգամ հոգաբարձութիւնը գանձանակը և հաշիւները ստուգելուց յետոյ—50 ռուբլուց աւելի եղած գումարը յանձնում են բանքային հաստատութեանց, այնպէս ինչպէս այդ բացատրուած է նախընթաց 80 յօդուածում։

82. Իւրաքանչիւր քահանայի ծխական ժողովից տրւում է մի ժապաւենեալ մատեան, որի մէջ քահանան պարտաւոր է ճշտիւ արձանագրել իւր բոլոր ծխերը, և դրանց արական և իգական անդամները։ Մատեանում իւրաքանչիւր ընտանիքի համար առ նուազն յատկացւում է մի թերթ։ Այդ մատեանում արձանագրւում է իւրաքանչիւր ծխականի անունը, ազգանունը, ծննդեան օրը և տարին, նաև մատեանում արձանագրելու օրը։

—Օր աւուր այդ մատեանում նշանակում է քահանան իւր ծխերի մէջ եղած ծնունդը՝ իւրաքանչիւր ընտանիքի թերթում, նաև վախճանուածներին և ծխականութիւնից

հրաժարուածներին։ Մատեանը պահւում է եկեղեցում։ Այդ մատեանում են արձանագրւում նաև բոլոր նորընկ ծխականները (տես յօդ. 7)։

83. Ամեն տարի հոկտեմբեր—նոյեմբեր ամիսներին ծխական եկեղեցու քահանաները, հոգաբարձունները երեսփոխը կազմում են մի ցուցակագրող յանձնաժողով և քաղելով քահանաների մատեաններից կազմում են ծխական իրաւասուների տարեցուցակ՝ ուր արձանագրուած պիտի լինին այն բոլոր կենդանի ծխականների անունները (տես յօդ. 22), որոնք արդէն հասել են կամ յաջորդ տարուայ ընթացքում հասնելու են 21 ամեայ հասակին (տես յօդ. 9)։

84. Ծխական իրաւասուների տարեցուցակը պարզ և մաքուր գրւում է և նոյեմբերի 20-ից ոչ ուշ կախւում է եկեղեցու ներսում և դրսում մուտքի դրան մօտ և մնում է այդտեղ մշտապէս մինչև յաջորդ տարուայ ցուցակի կախելը։ Հին տարեցուցակը վերցւում է նորը կախելիս։ Մի մի օրինակ այդ տարեցուցակից ուղարկւում է մերձաւոր Հոգևոր իշխանութեանը և Կոնսիստորիային։

85. Իւրաքանչիւր ծխական իրաւունք ունի բողոքելու ցուցակագրող յանձնաժողովի կազմած տարեցուցակում սպրդած սխալների դէմ նախ իրան յանձնաժողովին։ Եթէ ցուցակագրող յանձնաժողովը չյարգէ բողոքը, բողոքատուն իրաւունք ունի դիմել ծխական ժողովին, որն և տալիս է վերջնական վճիռ, նախ քան օրակարգի հերթական հարցերին անցնելը։

86. Ամեն մի ծխական եկեղեցու կամ աղօթատան տարեկան ընդհանուր եկամուտի մի տոկոսը (1%) իւրաքանչիւր տարուայ վերջում ուղարկւում է մերձաւոր Հոգևոր իշխանութեան ձեռքով ս. Էջմիածնի Սինոդը՝ Մայր Աթոռի գանձարանում պահելու համար իբրև յատուկ՝ ծխական եկեղեցիների պահեստի՝ գումար։

87. Այդ տոկոսը (յօդ. 86) վճարելուց ազատ են բոլոր այն ծխական եկեղեցիները և աղօթատները, որոնց տարեկան եկամուտը չէ հասնում հարիւր (100) ռուբլուս։

88. Բոլոր այն ծխական եկեղեցիները, որոնց տա-

ական եկամուտը հազար (1000) ռուբլուց աւելի է, մի հազարից աւելի գումարների համար մինչև տասն հազար ռուբլին՝ վճարում են ծխական պահեստին երկու տոկոս (2%)։

89. Բոլոր այն ծխական եկեղեցիները, որոնց տարեկան եկամուտը տասն հազար ռուբլուց աւելի է, տասն հազարից աւելի գումարների համար՝ վճարում են ծխական պահեստի գումարին երեք տոկոս (3%)։

90. Ծխական եկեղեցիների պահեստի գումարը գործադրում է միմիայն ամենակարօտ ծխական եկեղեցիների ամենակարևոր պէտքերին, Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ, ս. Էջմիածնի Սինոդի որոշմամբ, կարօտ ծխական համայնքների խնդիրներն ի նկատ առնելով։

91. Ծխական պահեստի գումարից տրուած նպաստների մասին մանրամասն հրատարակում է Ս. Էջմիածնի պաշտօնական թերթում։

92. Ծխական ժողովներն իրաւունք ունին պատճառաբանուած միջնորդութիւններ յարուցանել Վեհափառ Հայրապետի անունով տուած խնդրագրերով՝ այս կանոնադրութեան այս կամ այն կէտի փոփոխութեան համար։ Այդ միջնորդութիւնները կպահուին Վեհափառ Հայրապետի Դիւանում, ծառայելու համար իբրև նիւթ այս կանոնադրութեան ապագայ բարեփոխութեանց։

93. Ռուսաց պետութեան սահմաններից դուրս (Պարսկաստան, Հնդկաստան, Տաճկաստան, Եգիպտոս, Բուլղարիա, Ռումանիա, Կիպրոս. Եւրոպա. Ամերիկա և ն.) հայ ծխական համայնքներն, այս կանոնադրութիւնը յարմարեցնելով իրանց տեղական պէտքերին և եկեղեցական կազմակերպութեանը՝ ներկայացնում են Վեհափառ Հայրապետին ի հաստատութիւն։

93. Այս ծխական կանոնադրութեան պաշտօնական հրատարակմամբ և գործադրութեամբ դադարում են Հոգևոր բարձրագոյն, թեմական և տեղական իշխանութիւնների կողմից այս առարկայի վերաբերութեամբ տրուած այն բոլոր թէ ընդհանուր և թէ մասնական կանոնները ու հրահանգները, որոնք չեն ստացել պետական իշխանութեան հաստատութիւնը։

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL012105